# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Անունը, ազգանունը. Քրիստինե Ասատրյան
2. Զբաղեցրած պաշտոնը. ՀՀ Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ
3. Գործուղման վայրը և ժամկետները. Ստրասբուրգ, Ֆրանսիայի Հանրապետություն: Հոկտեմբերի 15-17, 2018
4. Հրավիրող կողմը. Եվրոպայի Խորհուրդ, Ժողովրդավարության Գլխավոր Տնօրենություն, ժողովրդավարական քաղաքացիության և մասնակցության վարչության երիտասարդության բաժին
5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը). Գործուղման նպատակն էր մասնակցել Ստրասբուրգում կայանալիք Երիտասարդության հարցերի եվրոպական ղեկավար կոմիտեի 61-րդ և Երիտասարդության հարցերի միացյալ խորհրդի 39-րդ հանդիպումներին:
6. Քննարկված թեմաները.
   - 2018 թվականի ընթացքում ԵԽ երկրներում երիտասարդական քաղաքականության իրականացումը:
   - 2019 թվականին ԵԽ երկրներում երիտասարդական քաղաքականության իրականացման համար ԵԽ կողմից անհրաժեշտ աջակցության տրամադրման մասին:
   - Ատելության խոսքի դեմ պայքարի շարժման արդյունքների և հետագա շարունակության մասին:
   - Երիտասարդ փախստականների սոցիալական նեռարման ուղղված քայլերի մասին:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

- Ծանոթացա Անտե Դոտմունդ, Եվրոպայի Խորհուրդի, Ժողովրդավարության Գլխավոր Տնօրենություն, ժողովրդավարական քաղաքացիության և մասնակցության վարչության երիտասարդության բաժնի ղեկավարին, ում հետ քննարկվեց ներկա և հետագա համագործակցության հեռանկարները:
- Հանդիպման ժամանակ ներկայացրեցի 2018 թվականին Հայաստանում Երիտասարդական քաղաքականության իրականացումը, ինչպես նաև ատելության խոսքի դեմ պայքարի շարժման արդյունքները:
- 2019 թվականին ԵՄ երկրներում երիտասարդական քաղաքականության իրականացման համար ԵՄ կողմից աջակցության տրամադրման մասին քննարկման ժամանակ ներկայացեցի ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությանը փորձագիտական երկու տիպի աջակցության տրամադրման անհրաժեշտության մասին:
- Հանդիպեցի Ժաննա Ֆեդոտոֆի, ով ներկայացնում էր եվրոպական երիտասարդական տեղեկատվական և խորհրդատվական մարմինը: Նրա հետ քննարկեցինք երիտասարդների ակտիվացմանը նպաստող ոչ ֆորմալ կրթություն և ակտիվ քաղաքացիություն խթանող հայերեն բառարանի ստեղծման անհրաժեշտության և դրա շրջանակներում հնարավոր համագործակցության մասին:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները,

պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

- Անտե Դոտմունդը փոխանցեց ինձ իր կողմից ստորագրված համագործակցության համաձայնագիր, որը ես նույնպես ստորագրեցի, որպեսզի նոյեմբերի 5-10-ը դրա շրջանակներում Հայաստանում կազմակերպվի «Միասին ասեք ձեր խոսքը» վերապատրաստման դասընթացը:
- 2019 թվականին ԵԽ երկրներում երիտասարդական քաղաքականության իրականացման համար ԵԽ կողմից աջակցության տրամադրման մասին քննարկման ժամանակ հաստատվեց ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությանը փորձագիտական երկու տիպի աջակցության տրամադրումը:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

- «Միասին ասեք ձեր խոսքը» վերապատրաստման դասընթացը պլանավորված է իրականացնել նախարարության Երիտասարդականա Աշխատողների վերապատրաստման ծրագրի շրջանակներում:
- ԵԽ երկրներում երիտասարդական քաղաքականության իրականացման համար ԵԽ կողմից ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությանը փորձագիտական երկու տիպի աջակցության տրամադրման համար անհրաժեշտ համապատասխան գործողությունների պլանի և համագործակացության համաձայնագրի

պատրաստում, որի պատասխանատուն կլինի ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության երիտասարդական քաղաքականության վարչությունը, ում քայլերը համատասխանաբար կհամաձայնեցվեն ՀՀ արտաքին գործերի, արդարադատության, և ֆինանսների նախարարության հետ:

- ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության երիտասարդական քաղաքականության վարչությունը քայլեր պետք է ձեռնարկի եվրոպական երիտասարդական տեղեկատվական և խորհրդատվական մարմնի հետ համագործակցություն ապահովելու համար, որպեսզի համատեղ ծրագիր մշակվի երիտասարդների ակտիվացմանը նպաստող հայերեն բառարանի ստեղծելու համար:

10. Գործուղվողը Քրիստինե Ասատրյան

11. Ստորագրությունը, ամսաթիվը 18.10.2018